Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-097-22.11.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«10. Հարկային և մաքսային մարմինների կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերով եթե վարչական իրավախախտման վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը կամ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում կամ նշանակվել է փորձաքննություն, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական վարույթին վարչական ակտի հասցեատիրոջ ներկայանալու, վարչական ակտի հասցեատիրոջը ի հայտ բերելու կամ փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 1 տարվա ընթացքում:»,

Հոդված 2. Օրենսգրքի 170^3-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում «Հարկերը, տուրքերը եւ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները» բառերը փոխարինել «Պետական եւ տեղական հարկերը, պետական եւ տեղական վճարները (բացառությամբ տեղական տուրքի), պետական բյուջե վճարվող օրենքով սահմանված այլ պարտադիր վճարները» բառերով,

Հոդված 3. Օրենսգրքի 219^1-ին հոդվածի 2-րդ մասում «գործերը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ 170^3 հոդվածով նախատեսված տեղական հարկերը եւ տեղական վճարները (բացառությամբ տեղական տուրքի) սահմանված ժամկետներում չվճարելու վերաբերյալ գործերը» բառերը,

Հոդված 4. Օրենսգրքի 244^2-րդ հոդվածի 1-ին մասում «170^2» թվից հետո հանել «170^3,» թիվը եւ «շրջանակներում» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ 170^3 հոդվածով նախատեսված պետական հարկերը եւ պետական վճարները, պետական բյուջե վճարվող

օրենքով սահմանված այլ պարտադիր վճարները սահմանված ժամկետներում չվճարելու վերաբերյալ գործերը» բառերը,

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 246.2-րդ հոդվածով.

«*Հոդված 246.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կասեցումը կամ երկարաձգումը*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում եւ ժամկետներով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«10. ~~«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում վարչական վարույթը կասեցվելու կամ երկարաձգվելու դեպքում կասեցման կամ երկարաձգման ժամկետները չեն հաշվարկվում (ներառվում) սույն հոդվածով նախատեսված վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետների մեջ~~

Հարկային և մաքսային մարմինների կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերով եթե վարչական իրավախախտման վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը կամ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում կամ նշանակվել է փորձաքննություն,

ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական վարույթին վարչական ակտի հասցեատիրոջ ներկայանալու, վարչական ակտի հասցեատիրոջը ի հայտ բերելու կամ փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 1 տարվա ընթացքում:»,

Հոդված 2. Օրենսգրքի 170[3] -րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում «Հարկերը, տուրքերը եւ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները» բառերը փոխարինել «Պետական եւ տեղական հարկերը, պետական եւ տեղական վճարները (բացառությամբ տեղական տուրքի), պետական բյուջե վճարվող օրենքով սահմանված այլ պարտադիր վճարները» բառերով,

Հոդված 3. Օրենսգրքի 219[1] -ին հոդվածի 2-րդ մասում «գործերը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ 170[3] հոդվածով նախատեսված տեղական հարկերը եւ տեղական վճարները (բացառությամբ տեղական տուրքի) սահմանված ժամկետներում չվճարելու վերաբերյալ գործերը» բառերը,

Հոդված 4. Օրենսգրքի 244[2] -րդ հոդվածի 1-ին մասում «170[2] » թվից հետո հանել «170[3] ,» թիվը եւ «շրջանակներում» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ 170[3] հոդվածով նախատեսված պետական հարկերը եւ պետական վճարները, պետական բյուջե վճարվող օրենքով սահմանված այլ պարտադիր վճարները սահմանված ժամկետներում չվճարելու վերաբերյալ գործերը» բառերը,

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 246.2-րդ հոդվածով.

«Հոդված 246.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կասեցումը կամ երկարաձգումը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում եւ ժամկետներով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-097-22.11.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխո ություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածում լրացնել նոր 10-րդ մաս, որի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վարչական վարույթը կասեցվելու կամ երկարաձգվելու դեպքում կասեցման կամ երկարաձգման ժամկետները չեն հաշվարկվում	**Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը ներկայացվել է նոր խմբագրությամբ:**	**Ընդունվել է:**

			(ներառվում) սույն հոդվածով նախատեսված վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետների մեջ»: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական վարույթը կասեցվելու կամ երկարաձգվելու դեպքում նախատեսվում է նշված ժամկետները հաշվարկել վարչական տույժ նշանակելու ընդհանուր երկամսյա ժամկետի մեջ, այսինքն՝ նախատեսվում է վարչական պատասխանատվության վաղեմության ընթացքի սառեցում՝ վարչական վարույթը կասեցնելու կամ երկարաձգելու դեպքում: Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել		

			հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ»: Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»: Այսինքն՝ Օրենքով վարչական վարույթի երկարաձգման այնպիսի ժամկետ է սահմանված, որը համապատասխանում է Օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության երկամսյա ժամկետին: Բացառություն է Օրենքի 47-րդ		

			հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված փորձագիտական եզրակացություն տալու համար ավելի երկար ժամանակի անհրաժեշտության դեպքը, որի պարագայում, վարչական պատասխանատվության ժամկետի սառեցման համար, կարծում ենք նպատակահարմար է առանձին ժամկետ սահմանել Օրենսգրքի 37-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է վարչական վարույթը կասեցնելու դեպքում վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետում կասեցման ժամկետները չհաշվարկելուն, ապա կարծում ենք նպատակահարմար է նախատեսել վարչական տույժ նշանակելու առավելագույն ժամկետը:		

			Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ. «10. Հարկային և մաքսային մարմինների կողմից քննվող վարչական իրավախախտումների գործերով եթե վարչական իրավախախտման վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը կամ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում կամ նշանակվել է փորձաքննություն, ապա		

			վարչական տույժը կարող է նշանակվել վարչական վարույթին վարչական ակտի հասցեատիրոջ ներկայանալու, վարչական ակտի հասցեատիրոջը ի հայտ բերելու կամ փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 1 տարվա ընթացքում»:»		